



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

374

Շ-88

Ֆ. ՇՈՒԿՈՎԻՆ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ  
ՔԱՂՄԻՆԻՄՈՒՄԸ ԳՅՈՒՂՈՒՄ

ՊԵՏՂՐԱՅ

1931

ՊԵՏՂՐԱՅ

MAR 20 1931

374  
C-88

Ե. ՇՈՒՐԻԳԻՆ

Առ

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ,  
ՔԱՂՄԻՆԻՄՈՒՄԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Թարգմ. Հ. ԼԵՎՈՆՅԱՆ

1794  
ԿԵՒ  
ԷՅ-ՇԻԿԻ

1931 ՅԵՐԵՎԱՆ  
ՀՍԽՀ - ՍՍՐՔ  
Պ. Ա. ՄԱՏՈՒԿՅԱՆ  
ՍՅԱՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ

11 3 NOV 2013

52.336

**ՔԱՂԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԳՅՈՒ-  
ՂԱԿԱՆ ԿՈՍՑԵՐԻՏՆԿԱՆՆԵՐԻ ՍԱՐՏԱԿԱՆ ԽԸՆ  
ԴԻՐՆ Ե**

Համ ԼԿՑԵՄ IX համագումարը միության գյուղական կազմակերպություններին կարևորագույն խնդիր առաջադրեց, այն է՝ վեց ամսվա ընթացքում վերացնել գյուղի կոմյերիտականների քաղաքական անգրագիտությունը:

Այս վորոշումը համագումարն ընդունեց ներկա շրջանում գյուղական կոմյերիտմիության առաջ ծառայած խնդիրների սերտ կապակցությունը: Ինչպես և այդ կապակցությունը: Այդ կապակցությունը նրանումն է, վոր կոմյերիտմիության գյուղական կազմակերպությունների աշխատանքը բարձր աստիճանի փոխադրելն անիմաստ է առանց գյուղական կոմյերիտմիության լայն խավերի քաղաքական գրագիտության մահարդակին ավելացնելու, անիմաստ է առանց խո-

Հրատարակ. № 1856

Պլավինա № 6001 (բ) Գառվեր № 5330 Ցիրած 4000

Գեորգյանի ասպարան, Յեղևան

բապեա ըմբռնելու սոցիալիստական շինարարութեան ներկա եռապն ու կոմյերիտմիութեան խնդիրները սոցիալիզմի առաջին շրջանի պայմաններում:

Իդուր չեք, վոր համադումարը կ'ի զեկուցման առթիվ ընդունած իր բանաձևի մեջ գրում եք.

«Համագումարն ընդգծում է, վոր կոմյերիտմիութեան զարգացման ներկա շրջանում Համ ԼԿՅԵՄ անուամբ թեորեսիկական մակարդակի բարձրացումը հիմնականում տնտեսական շինարարութեան ուղղութեամբ կատարված շրջադարձըն ամրացնելու և միութեան աշխատանքն ել ավելի բարձր աստիճանի վրա դնելու վճռական ուղայմաններից մեկն է հանդիսանում»:

Քաղանգրագիտութեան վերացման գործը ճշգճել չի կարելի: Այն պեաք է դիտել իբրև որվա մարտական խնդիր, առանց այն լուծելու մենք չենք կարող վերացնել մեր գյուղական կազմակերպութեան ներքին աշխատանքում չեղած թեորութիւնները, չենք կարող գլուխ բերել մեր առաջ դրված խնդիրները, չենք կարող յերիտասարդական մասսաների կազմակերպիչը լինել, այլ խոսքով չենք կարող կատարել այն դերը, վորը մեզ վրա դրել է բայլչեկիների կոմկուսակցութիւնը:

## ԻՆՉ ԿՏԱ ՄԵՉ ՔԱՂԱՄԻՆԻՄՈՒՄԸ

Ընկ. Կազանովիչը Համ ԼԿՅԵՄ IX համագումարին մի հետաքրքիր փաստ պատմեց գյուղական կոմյերիտականների քաղաքական անգրագիտութեան վերաբերյալ.

«Զրույցի ժամանակ մենք մեկին հարց տրվինք, թե ի՞նչ բան է Համ ԼԿՅԵՄ: Նա կանգ առավ, մտածեց, հետո պատասխանեց Համամիութենական կոմունիստական Կուսակցութիւն:

Իսկ ի՞նչ բան է խորհրդային հանրապետութիւնը և ինչի՞վ է նա տարբերվում դեմոկրատական հանրապետութիւնից:— Ե՞նպես, ելի, ասում է,— հանրապետութիւն, մեկ խոսքով՝ ժողովուրդ»:

Անթիվ յայպիսի փաստեր կարելի չէ բերել: Այդ փաստերը գալիս են ասելու, վոր տարրական քաղաքական հարցերում մեր գյուղական կոմյերիտականներն անգրագիտ են: Գյուղական կոմյերիտականներն իրենց անդամների այդպիսի քաղանգրագիտութեան պայմաններում կարող են արդյոք յերիտասարդական լայն մասսաների ակտիվութեան կազմակերպիչը լինել, զեկավարել նրան, հարկ չեղած հունով տանել նրան: Անտարակույս վոչ:

«Կոմյերիտմիութեան խնդիրը նրանուհե ե  
ե, վորպետսի նա կուսակցութեան գլխավոր գծի  
համար մղվող պայքարում, դասակարգային թըը-  
նամու ղեմ մղվող պայքարում ամբողջ Ֆրոնտով  
գաղափարական ու կազմակերպչական գրոհ ծա-  
վալի՝ լենինյան կոմյերիտմիութեան ղեկավարու-  
թյամբ և նրա դրոշի ներքո բովանդակ բանվո-  
րական ու կոլտնտեսական—գյուղացիական լերի-  
տասարկութեանը, նվաճելու համար» (X համագու-  
մարի վորոշումները):

Սոցիալիստական շինարարութեան խնդիրնե-  
րի իրագործմանը, սոցիալիստական եկոնոմիկայի  
հիմքերի կառուցմանը, կոլտնտշարժման հիմքերի  
ամրացմանը և կուլակուլթյան՝ իբրև դասակարգի՝  
վերացմանը ակտիվ մասնակցութուն ունենալու  
համար հարկավոր ե սովորել, հարկավոր ե բար-  
ձրացնել կուլտուր-քաղաքական մակարդակը:

Աշխատավոր յերիտասարդութեան լայն մաս-  
սաների կազմակերպչի ու ղեկավարի գերը լիովին  
իրագործելու համար հարկավոր ե մանրամաս-  
նորեն գիտենալ հանձնարարված գործը, պարզ  
գիտակցել առաջադրված խնդիրները, — հարկա-  
վոր ե սովորել:

Համ ԼԿՅԵՄ Կենտրոնական Կոմիտեն 1931  
թվի փետրվարի 19-ի իր վորոշմամբ սահմանել

և Բալախան մինուում, վորի յուրացումը պար-  
տադիր ե բոլոր գյուղական կոմյերիտականների  
համար:

ԿԿ ը սահմանել ե յերկու քաղմինուում, մեկը  
քաղաքականապես անգրագետներին, իսկ մյուսը  
քաղաքականապես կիսագրագետներին համար:

Քաղաքականապես անգրագետ կոմյերիտա-  
կանների համար նշանակված մինիմումի մեջ  
մտնում ե չորս թեմա.

1. Լենինի կուսակցութեան մասին:
2. Դասակարգային պայքարի մասին.
3. ԽՍՀ ե խորհրդային իշխանությունը.
4. Կոմյերիտմիութեան հերթական խնդիրնե-  
րը:

Քաղաքականապես կիսագրագետ կոմյերի-  
տականների համար նշանակված մինիմումի մեջ  
մտնում են մոտավորապես նույն հարցերը:

1. Կուսակցութեան քաղաքականութունը գյու-  
ղում:
2. Մենք թեև կոխել ենք սոցիալիզմի շրջանը.
3. Համ Կ (բ) Կ բանվոր դասակարգի կու-  
սակցությունն ե:

Քաղաքականապես անգրագետ կոմյերիտա-  
կաններին քաղմինիմումի թեմաները մշակելիս  
մենք մոտավորապես պետք ե ընդգրկենք հարցե-  
րի հետևյալ շրջանակը:

«ԼԵՆԻՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅԻ  
ՇՈՒՐՁԸ

Հասկացողութիւնն կուսակցութեան մասին: Ի՞նչպէս ե կառուցված մեր կուսակցութիւնը, բայշնիզմի կազմակերպչական սկզբունքները: Ի՞նչպէս ե կուսակցութիւնը կապված մասսաների հետ: Կուսակցութիւնը ե կոմյերիտմիութիւնը: Ո՞վ կարող ե կուսակցութեան անդամ լինել: Պայքար թեքումների դեմ ե կուսակցութեան միասնութեան նշանակութիւնը: Կուսակցութեան քաղաքականութիւնը գյուղատնտեսութեան կոլեկտիվացման բնագավառում: Կուսակցութեան քաղաքականութիւնը կուլակի, միջակի, չքավորի, բատրակի, կոլտնտեսականի վերաբերմամբ:

Թեմայի նպատակադրումն ե.

1. Պարզաբանել վոր՝

ա) Համ կ (բ) կ բանվոր դասակարգի առաջավոր շնկատն ե, վորջ աշխատավորութեան առաջնորդն ու ղեկավարը.

բ) Պայքարը չերկու Ֆրոնտի վրա՝ ընդգեմ տվյալ ետապի գլխավոր վտանգ աջ թեքման, ընդդեմ «ձախ» թեքման ե նրանց նկատմամբ հաշտվողականութեան — սոցիալիստական շինարարու-

թեան խնդրների հաջող լուծման հիմնական պայմանն ե.

գ) Կուսակցութեան քաղաքականութիւնը գյուղում — համատարած կոլեկտիվացման ե աչք հիման վրա կուլակութեան՝ վորպէս դասակարգի՝ վերացման կուրս վերցնելը, կոլտնտշարժման հիմքերի ամբողջումը — միակ ճիշտ քաղաքականութիւնն ե, վորը տանում ե դեպի աշխատավոր գյուղացիութեան բարելավումը, նրա նշութակման ու կուլտուրական մակարդակի բարձրացումը:

դ) Կուսակցութիւնը Լենինի կոմյերիտմիութեան ղեկավարն ե: Համ ԼԿՅՄ-ի գիծը կուսակցութեան գիծն ե: Կոմյերիտմիութիւնը կուսակցութեան ոգնականն ե սոցիալիստական շինարարութեան գործում:

2. Կոմյերիտականներին մոբիլիզացիայի չենթարկել տվյալ շրջանի, տվյալ կոլտնտեսութեան, խորհտնտեսութեան, ՄՏԿ-ի ե գյուղի կոնկրետ պայմաններում կուսակցութեան գլխավոր գծի համար պայքարելու:

«ԻՍՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԿԱՐ» ԹԵՄԱՅԻ  
ՇՈՒՐՁԸ

Հասկացողութիւնն դասակարգի, դասակարգային շահերի ու հակասութիւնների մասին:

«ԼԵՆԻՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԹԵՄԱՅԻ  
ՇՈՒՐՁԸ

Հասկացողություն կուսակցութեան մասին: Ի՞նչպես է կառուցված մեր կուսակցությունը, բայց չեմք մի կազմակերպչական սկզբունքները: Ի՞նչպես է կուսակցությունը կապված մասսաների հետ: Կուսակցությունը և կոմյերիտմիությունը: Ո՞վ կարող է կուսակցութեան անդամ լինել: Պայքար թեքունների դեմ և կուսակցութեան միասնութեան նշանակութեանը: Կուսակցութեան քաղաքականութեանը գյուղատնտեսութեան կոլեկտիվացման բնագավառում: Կուսակցութեան քաղաքականութեանը կուլակի, միջակի, չքավորի, բատրակի, կոլտնտեսականի վերաբերմամբ:

Թեմայի նպատակադրումն է.

1. Պարզաբանիչ վոր՝

ա) Համ Կ (բ) Կ բանվոր դասակարգի առաջավոր շոկատն է, վորջ աշխատավորութեան առաջնորդն ու ղեկավարը:

բ) Պայքարը չերկու ֆրոնտի վրա՝ ընդդեմ սոլյալ ետապի գլխավոր վտանգ աջ թեքման, ընդդեմ «ձախ» թեքման և նրանց նկատմամբ հաշտվողականութեան—սոցիալիստական շինարարու-

թեան խնդրների հաջող լուծման հիմնական պայմանն է.

գ) Կուսակցութեան քաղաքականութեանը գյուղում—համատարած կոլեկտիվացման և աջ հիման վրա կուլակութեան՝ վորպես դասակարգի՝ վերացման կուրս վերցնելը, կոլտնտարժման հիմքերի ամրացումը—միակ ճիշտ քաղաքականութեանն է, վորը տանում է՝ դեպի աշխատավոր գյուղացիութեան բարելավումը, նրա նյութական ու կուլտուրական մակարդակի բարձրացումը:

դ) Կուսակցութեանը Լենինի կոմյերիտմիութեան ղեկավարն է: Համ ԼԿՅԵՄ-ի գիծը կուսակցութեան գիծն է: Կոմյերիտմիութեանը կուսակցութեան ոգնականն է սոցիալիստական շինարարութեան գործում:

2. Կոմյերիտականներին մոբիլիզացիայի չնութարկել սովյալ շրջանի, սովյալ կոլտնտեսութեան, խորհտնտեսութեան, ՄՏԿ-ի և գյուղի կոնկրետ պայմաններում կուսակցութեան գլխավոր գծի համար պայքարելու:

«ԴՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ» ԹԵՄԱՅԻ  
ՇՈՒՐՁԸ

Հասկացողութեան դասակարգի, դասակարգային շահերի ու հակասութեանների մասին:

Դասակարգերը կապիտալիստական լերկրներում  
և ԽՍՀՄ-ում: Ինչհետև դասակարգային պայքարն  
անխուսափելի յե անցման շրջանում: Ինչպես և  
լուծվում «հվ սւմ» լենինյան հարցը: Դասակար-  
գային պայքարի մահացման թեորիայի և լերիտա-  
սարդ կուլակին վերադաստիարակելով կոմյերի  
տական դարձնելու թեորիայի ոպորտունիստական  
եյուլթյունը: «Գյուղացիական աշխատավորական  
կուսակցության», «Մենշևիկ հակահեղափոխական-  
ների Միութիւնական ըլուրոյի» գործը և այդ կու-  
սակցությունների կապը միջազգային իմպերի-  
ալիզմի հետ, իբրև դասակարգային պայքարի  
սրման ցուցանիշներ:

Միջազգային իմպերիալիստների վոտնձգու-  
թյունները Խորհրդային Միութիւն դեմ, իբրև  
կապիտալիստների դասակարգային ատելության  
դրսեվորումներ: Պատերազմի վտանգը և Խ. Մի-  
ութիւն պաշտպանունակութիւն ամրացման իւրն-  
դիրներ:

Տվյալ թեմայի նպատակադրումն է.

1. Պարզաբանել.

ա) Դասակարգային պայքարի սրման անհր-  
բաժեշտությունը անցման շրջանում:

բ) Համատարած կոլեկտիվացման հիման վրա

կուլակութիւնը՝ վորպես դասակարգի՝ վերացնե-  
լու լուղունգը:

գ) Դասակարգային պայքարի հարցի վերա-  
բերյալ աջ ոպորտունիստական հայացքների ե-  
լությունը.

դ) Գյուղական կոմյերիտիութիւն դասակար-  
գային աշալթութիւն բարձրացման խնդիրները:

2. Մորիլիզացիայի լենիսարկել կոմյերիտա-  
կաններին պայքարելու կուլակի՝ կոլեկտիվացման  
և սոցիալիստական շինարարութեան այդ թշնա-  
մու դեմ:

## «ԻՆՉ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՁԸ

Պրոլետարիատի դիկտատուրան: Խորհուրդնե-  
րը պրոլետարական դիկտատուրայի որգաններն  
են: Ինչպես և կառուցված խորհրդային իշխա-  
նությունը: Բուրժուական և պրոլետարական դե-  
մոկրատիա: Խորհուրդները «յերեսով դեպի կոլ-  
տնտեսական շինարարություն» լուղունգով վե-  
րակառուցելու և կուսակցության գլխավոր դժի  
կիրառողի նրանց դերը բարձրացնելու խնդիր-  
ները: Խորհուրդները աշխատավորական մասա-  
ների կամքի արտահայտիչն են: Ո՞վ խորհուրդ-

ներում ընտրելու իրավունք ունի: Կոմյերիտմի-  
ուլթյան խնդիրները խորհրդային շինարարության  
ասպարիզում:

Այս թեմայի նպատակադրումն է՝ կոմյերի-  
տականներին հասկացողություն տալ խորհրդա-  
լին սահմանադրության, պրոլետարական դիկ-  
տատուրայի որդան խորհուրդների, գյուղական  
խորհուրդների խնդիրների և խորհուրդների ամ-  
բացման գործում կոմյերիտմիության կատարե-  
լիք գերի մասին:

### «ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԵ- ԴԻՐՆԵՐԸ» ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՁԸ

Կոմյերիտմիությունը կուսակցության ոգնա-  
կանն է: Կոմյերիտմիության մասնակցությունը  
գյուղատնտեսության սոցիալիստական վերակա-  
ռուցման գործում:

Գյուղական կոմյերիտմիության աշխատանքի  
թերությունները: Տնտեսական աշխատանքի բար-  
ձունքներին տիրապետելու խնդիրը կուլտուե-  
սություններում: Հացահատիկային պրոբլեմի, ա-  
նասնապահության, տեխնիկական կուլտուրանե-  
րի և կադրերի պրոբլեմների վերջնական լուծու-  
մը գյուղական կոմյերիտմիության հանդուցային

խնդիրներն են: Կուլտուտեսական նոր հոսանքի համար  
պայքարելու խնդիրները:

Կոմյերիտմիությունը կուսակցության պլա-  
վոր գծի համար մղվող պայքարում:

Պրոլետարական դեկավարության ամբացման  
խնդիրները: Աճման խնդիրները:

Տվյալ թեմայի նպատակադրումն է.

1. Պարզաբանել կոմյերիտմիության գերը  
գյուղատնտեսության սոցիալիստական վերակա-  
ռուցման գործում, նրա հետագա խնդիրները  
կուսակցության գլխավոր գծի, կուլակության՝  
վորպես դասակարգի՝ վերացման, համաաարած  
կուլեկտիվացման համար մղվող պայքարում:

2. Կոմյերիտականներին մոբիլիզացիայի յեն-  
թարկել՝ լուծելու համար հաջողությամբ առաջա-  
դրած խնդիրները (մասնակցություն աշխատա-  
ցանի աշխատանքներին, գարնանացանին և այլն):

Այսպիսով, քաղմինիմումի մեջ մտնող հար-  
ցերի շրջանակն իր մեջ պարունակում է բոլոր  
այն հիմնական հարցերը, վորոնց հետ պետք է  
ծանոթ լինի լուրաքանչուր կոմյերիտական, հար-  
ցեր՝ վորոնց իմանալն անհրաժեշտ է ամենորյա  
աշխատանքում:

Այս քաղմինիմումի լուրացումը պարագլխի  
և յուրաքանչուր քաղաքականապես անգրագետ

կամ կերտականի համար 6 ամսվա ընթացքում նա այն պետք է լուրացնի:

Յերկրորդ քաղմինիմումը հիմնականում նույն հարցերն է պարունակում: Այս լերկու քաղմինիմումները կազմված են այն հաշվով, վորպեսզի կոմիտիտականներին զինեն քաղաքական այնպիսի գիտելիքներով, վորոնք անհրաժեշտ են գործնական աշխատանքի համար, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանը ակադիվ մասնակցութուն բերելու համար, դասակարգային թշնամու, կուլակային թշնամի ազդեցությունների դեմ մղվող պայքարում դասակարգային մարտունակությունը բարձրացնելու համար, հանուն կուսակցութիան գլխավոր գծի պայքարելու համար:

### Ձ. ԻՆՉՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԿ ՔԱՂՄԻՆԻՄՈՒՄԸ

Փորձը ցույց է տվել, վոր ամենից լավ աշխատում է այն դպրոցը, վորը մշակվող հարցերը շահկապում է պրակտիկայի հետ, ունենորի կյանքի հետ, արձագանքում է նրան հուզող հարցերին:

Փորձի այն խզումը պրակտիկայից մինչև որս

եւ նույն է իբրև կոմյերիտիստության քաղմության հիմնական թերությունը: Մեծ մասամբ դրանով է բացատրվում քաղուսուցման անբավարար դրությունը, դպրոցների և խմբակների մատուցումը:

Ամեն մեկը, վոր դպրոց կամ խմբակ է գըրվում, դպրոցում փնտոում է այն հարցերի պատասխանը՝ վորոնք նրան հուզում են բլիշի, կոտնտեսության և այլ առարկաների գործնական աշխատանքներում: Իսկ լեթե նա այդ պատասխանը չի ստանում, այն ժամանակ նա թողնում է դպրոցը, հիասթափվում է նրանից: Այդ հասկանալի լե: Մեզանից ամեն մեկը մտածում է այն պատկերներով և այն առարկաներով, վորոնք շրջապատում են մեզ, վորոնցով ապրում ենք մենք: Դպրոցի խնդիրը հենց նրանումն է կայանում, վոր մեզ մտախի, մեզ ծանոթ այդ կյանքի հիման վրա հաղորդի հեռավորը, դեռևս անծանոթը, ծանոթացնի կուսակցության և խորհրդային իշխանության քաղաքականության հիմնական հարցերին:

Ուստի մեր վողջ ուսուցումը պետք է սերտորեն շահկապի հեղափոխական պրակտիկայի հետ, սոցիալիստական շինարարության ֆրոնտներում մղվող մեր պայքարի հետ:

Գպրոցի խնդիրն է—սխտեմավորել ունկնդիրներին փորձը, այն ընդհանրացնել, նրան թեորեափական հիմնավորում տալ և հասկանալի ձևով հաղորդել ունկնդիրներին: Քաղմիրնիմումի ուսումնասիրութեան դործն անհրաժեշտ է կազմակերպել այս կանոնի հիման վրա: Նրա հետևանքն այն պետք է լինի, վոր բարելավվի գյուղական Ղլիջների աշխատանքը, ունկնդիրները մոբիլիզացիայի յենթարկվեն պաշտօններու կուսակցութեան զլխավոր գծի համար տվյալ կոնկրետ պայմաններում—բլիշում, կուտնտեսութունում, խորհտնտեսութունում, ՄՏԿ-ում, գյուղում:

Այս խնդիրը հեշտանում է նրանով, վոր քաղմիրնիմումի հարցերի շրջանակն իր մեջ պարունակում է սոցիալիստական շինարարութեան ժամանակակից խնդիրները: Այս հարցերից ամեն մեկը հեշտ է շաղկապել կուտնտեսութեան և խորտնտեսութեան կյանքի հետ:

Գպրոցն իր ունկնդիրներին վոչ միայն գիտետելիքներ պետք է տա, այլև նրանց սովորեցնի աշխատել: Քաղմիրնիմումի հարցերի ուսումնասիրութեան կապակցութեամբ անհրաժեշտ է լայնորեն կազմակերպել ունկնդիրներին գործնական շխատանքը: Սա ուսումը պրակտիկայի հետ շաղ-

կապելու խնդրի լուծման անբաժան մասն է հանդիսանում:

Մեր խմբակների և գպրոցների աշխատանքի պրակտիկայում շատ որինակներ կան, վորոնք ցույց են տալիս, թի ինչպես է իրագործվում դաստիարակութեան այս լենինյան սկզբունքը: Դուբրովսկի (Լենինգրադի մարզ) գյուղյերիտին կից քաղպրոցը ներկա ուսումնական տարում յերեք կուտնտեսութուն կազմակերպեց: Այս գրպրոցի ունկնդիրները հարցերը գպրոցում մշակելով չեյին սահմանափակվում: Գպրոցական պարապմունքներից հետո նրանք գնում էյին գյուղացիների մոտ, զրուցներ էյին անցկացնում և այդ յեղանակով նոր տնտեսութուններ էյին հավաքազրում կուտնտեսութեան մեջ:

«Կարմիր Հոկտեմբեր» (Կենտրոնական սևահողային Մարզի Բողուչարովսկի շրջան) կուտրնտեսութեան բլիշի քաղպրոցն ինդուստրացման մասին զրուցը մշակման յենթարկելիս կազմակերպեց ինդուստրացման փոխառութեան տարածման բրիգադներ: Ահա թի ինչ է գրում այդ գպրոցի պրոպագանդիստ ընկ. Տրոֆիմովը «В мощь португеше» ժուրնալի կոմյերիտական բաժնում:

«Մեր գպրոցն ունի 35 հոգի, 16 կոմյերիտա-



կան և 10 անկուսակցական: Մշակում ենք «Յերկրի ինդուստրացում» թեման. ունենդիրները շատ լավ հասկացան, թե ինչպիսի կարևորություն ունի ինդուստրացումը թե գյուղական և թե վողջ ժողովրդական տնտեսության համար: Մենք վորոշեցինք ոգնել յերկրի ինդուստրացմանը, կադմակեպեցինք «Հնգամյակը չորս տարում» փոխառության տարածման խմբեր և տարածեցինք 100 ռուբլու որիզացիա: Մենք վորոշեցինք կիրակնորյակ կադմակերպել ուտիլ-հոլմույթ հավաքելու համար: Բոլոր կոմյերիտականներն ու անկուսակցականներն իրենց հարվածային հայտարարեցին գարնանացանի կամպանիայի նախապատրաստման գործում և հիմա համառորեն պատրաստվում են գարնանացանի կամպանիային»:

Բելոռուսիայի Բերյոզնինսկի շրջանում ընթացիկ քաղաքականության 8 խմբակ ակտիվ ոժանդակութուն ցույց տվին կոլտնտեսութանը ցանքսի ժամանակ, կադմակերպելով սերմադտման, գյուղատնտեսական ինվենտարի նսրոգման և մոխրի հավաքման բրիգադներ:

Կուլտուրական շինարարության հարցը մշակման յննթարկելուց հետո Ժուկովիցի գյուղի քաղաքացի ունկնդիրներն իրենց կուլտրանակային հայտարարեցին և վերացնում են կոլտնտեսականների անգրագիտությունը:

Այս որինակները գալիս են ասելու, վոր մեք դպրոցներն ու խմբակները սկսում են ճիշտ լուծում տալ թեորիան պրակտիկայի հետ շողկապելու խնդրին, ուսուցումը դարձնում են գործնական, ճիշտ ճանապարհ են դուրս գալիս:

Թեորիայի և պրակտիկայի միասնության սկզբունքն և հետզհետե, ավելի ու ավելի թափանցել քաղաքացիների և խմբակների աշխատանքի մեջ:

Թեորիան պրակտիկայի հետ շողկապելու խընդրում խոշոր նվաճումներ ունեն կուլտրոցները: Մեր կոմյերիտական դպրոցները նրանցից պետք է սովորեն: Ահա որինակներ. ընկ. Չեպակովը Մոսկվայի մարզի անասնապահական շրջանների կուլտուրավորության ցանցի դրության մասին գրած հուլվածում հետևյալն է հարորում.

«Իվանովսկի շրջանում կուլտրոցների նախաձեռնությամբ կազմակերպված է հացահատիկի յերկու և գետնախնձորի մեկ կարմիր արոզ. կադմակերպած է յերեք նախաձեռնող խումբ, վորոնք այսոր արդեն կոլտնտեսություններ են ստեղծել: Նշանակված է «Հնգամյակը չորս տարում» փոխառության տարածման բրիգադ»:

Կոնստանտինովսկի շրջանում հացամթերումներ

անցկացնելիս կուսդպրոցի ունկնդիրներն աշխատում ելին գլուղերում, ոժտեղակում ելին կարմիր բարձրների կազմակերպմանը:

Տվերի շրջանում ստեղծված են կոլտնտեսությունների կազմակերպման նախաձեռնող խմբեր:

Լապտեվսկի շրջանում առաջինը ունկնդիրներն ելին, վոր ավելցուկ հացը հանձնեցին պետութանը:

Սիչև գլուղի նախակրթական դպրոցի կատարած աշխատանքի շնորհիվ 12 հոգի կոլտնտեսություն մտան:

Ունկնդիրները նախաձեռնող խումբ կազմակերպեցին:

Բերյոզովո գլուղում կամպանիայի ժամանակ դպրոցը բաժանվեց բրեգադներին, ըստ տարբեր հողամասերի, վորտեղ և աշխատանք կատարեց: Գպրոցի նախաձեռնող խումբը դաշտ դուրս լեկավ ցելի, իր յետևից տարավ գլուղացիներին և հերկեց 12 հեկտար: Խորհանտեսությունում, լերբ բանուժի սուր պակաս եր զգացվում, դպրոցը կազմաբաղելու համար շաբաթը կաներ կազմակերպեց: Ընթացիկ քաղաքականության խմբակը պարապմունքների ժամանակ լերևան հանեց չորացման կոմբինատի առանձին բանվորների կեղծ հարվածայնությունը: Կոմունայում, լերբ խմբա-

կը վնասարարություն վերաբերյալ թեման եր մշակում, 13 հոգի կուսակցություն մեջ մտան: Իսկ 40 հոգի իրենց հարվածային հայտարարեցին:

Քաղմինիմումն անցնելիս պետք է լայնորեն ոգտադործել այս փորձը:

Քաղմինիմումի մշակման հիմնական խնդիրն է ունկնդիրներին մոբիլիզացիայի լենթարկել պայքարելու կուսակցություն գլխավոր դժի համար, և նրանց ներգրավել կուսակցության գծի իրականացման գործնական աշխատանքին:

Գործնական աշխատանքը հիմնականում պետք է ըղխի տեղական կազմակերպությունների պլաններին:

Քաղմինիմումի մշակման համար կարելի լե հանձնարարել հետևյալ միջոցառումների կիրառումը:

«Լենինի կուսակցությունը» թեմայի առթիվ կարելի լե այսպիսի պարտավորություններ վերցնել՝

1. Գլուղացիություն հանդեպ կուսակցության սենեցած վերաբերմունքի մասին գլուղացիների հետ զրույցներ անցկացնել, պարզաբանել կուսակցության գիծը խորհանտեսությունների և կոլտնտեսությունների շինարարություն խնդրում:

2. Ստեղծել կոլտնտեսութիւնների հավաքա-  
դրման բրիգադ:

3. Ունկնդիրներից կազմված բրիգադի միջոցով  
ստուգել կոլտնտեսութիւնն պլանի կատարումը,  
աշխատանքի կազմակերպումը, ներքին կարգապահ-  
ութիւն կանոնները:

4. Գյուղացիների համար պարզաբանել գյուղ-  
հարկի նոր որոնքը:

Դպրոցը գործնական մեծ աշխատանք կարող  
է կատարել «Ի՞նչ է խորհրդային իշխանութիւն-  
ներ» և «Կոմյերիտմիութիւնն հերթական խնդիրնե-  
րը» թեմաների շուրջը: Ունկնդիրներից կազմված  
բրիգադը կարող է ծանոթանալ այն աշխատան-  
քի հետ, վորը կատարել է խորհուրդը կոլեկտիվաց-  
ման ուղղութիւնով: Ինչպես է խորհուրդն աշխա-  
տավոր գյուղացիներին մասնակից դարձնում իր  
աշխատանքին, ինչպիսի աշխատանք է նա կա-  
տարում չքավորների և միջակների մեջ, ինչպես  
է ղեկավարում դպրոցն ու խրճիթ-ընթերցարա-  
նը:

Դպրոցը այս թեմաների առթիվ կարող է մի  
շարք պարտավորութիւններ վերցնել.

1. Անգրագետների և կիսագրագետների հաշ-  
վառում:

2. Ցանքի պլանի կատարման ստուգում:

3. Գյուղհարկի հավաքման սպիտակագիր:

4. Հարկման որոշումների ստուգում:

5. Կոլտնտեսութիւնների հավաքագրում:

6. Զրույցներ կոլեկտիվացման մասին:

7. Զքավոր, բատրակ, միջակ և կոլտնտեսա-  
կան յերիտասարդների հավաքագրումը կոմյե-  
րիտմիութիւնն մեջ:

8. Գյուղացիների հավաքագրումը կոոպերա-  
ցիայում:

9. Սոցմրցման և հարվածայնութիւն կազմա-  
կերպում կոլտնտեսութիւնում, հարվածային բրի-  
գադների կազմակերպում:

10. Ինքահամարի նախապատրաստման քա-  
տուգում, գյուղատնտեսական ինվենտարի նո-  
րոգման աշակցութիւն:

11. Երջանի հրդեհաշիջ գործի ստուգում, ագրո-  
տեխնիկական խմբակների, կոմյերիտմիութիւն  
մեջ հավաքագրող բրիգադի, «Комсомолская  
Правда»-ում և տեղական մամուլում բջիջի, դըպ-  
րոցի ու կոլտնտեսութիւնն աշխատանքը լուսա-  
բանող բրիգադի կազմակերպում և ալլն:

Այսքանով չի սպասվում դպրոցների և խմ-  
բակների գործնական աշխատանքը. ունկնդիր-  
ներին գործնական աշխատանքի ներգրավելու  
այլ ձևեր ու մեթոդներ շատ կան: Տեղական պայ-  
մաններից յեղնելով հարկավոր է ընտրել հիմնա-  
կանն ու գլխավորը և դպրոցի ուժերի ճիշտ բա-

2. Ստեղծել կալանատեսուցիւունների հավաքա-  
դրման բրիգադ:

3. Ունկնդիրներից կազմված բրիգադի միջոցով  
ստուգել կոլտնտեսութեան պլանի կատարումը,  
աշխատանքի կազմակերպումը, ներքին կարգապահ-  
ութեան կանոնները:

4. Գյուղացիների համար պարզաբանել գյուղ-  
հարկի նոր որոնքը:

Դպրոցը գործնական մեծ աշխատանք կարող  
է կատարել «Ի՞նչ է խորհրդային իշխանութիւն-  
ը» և «Կոմյերիտմիութեան հերթական խնդիրնե-  
րը» թեմաների շուրջը: Ունկնդիրներից կազմված  
բրիգադը կարող է ծանոթանալ այն աշխատան-  
քի հետ, վորը կատարել է խորհուրդը կոլեկտիվաց-  
ման ուղղութեամբ. ինչպես է խորհուրդն աշխա-  
տավոր գյուղացիներին մասնակից դարձնում իր  
աշխատանքին, ինչպիսի աշխատանք է նա կա-  
տարում չքավորների և միջակների մեջ, ինչպես  
է ղեկավարում դպրոցն ու խրճիթ-ընթերցարա-  
նը:

Դպրոցը այս թեմաների առթիվ կարող է մի  
շարք պարտավորութիւններ վերցնել.

1. Անգրագետների և կիսագրագետների հազ-  
վառում:

2. Ծանօթի պլանի կատարման ստուգում:

3. Գյուղհարկի հավաքման սպիտակիտ:

4. Հարկման որոշումների ստուգում:

5. Կոլտնտեսութիւնների հավաքագրում:

6. Զրույցներ կոլեկտիվացման մասին:

7. Զքավոր, բատրակ, միջակ և կոլտնտեսա-  
կան յերիտասարդների հավաքագրումը կոմյե-  
րիտմիութեան մեջ:

8. Գյուղացիների հավաքագրումը կոոպերա-  
ցիայում:

9. Սոցմրցման և հարվածայնութեան կազմա-  
կերպում կոլտնտեսութիւնում, հարվածային բրի-  
գադների կազմակերպում:

10. Ինքահամալիր նախապատրաստման քա-  
տուգում, գյուղատնտեսական ինվէնտարի նո-  
րոգման աշակցութիւն:

11. Շրջանի հրդեհաշիջ գործի ստուգում, ագրո-  
տեխնիկական խմբակների, կոմյերիտմիութեան  
մեջ հավաքագրող բրիգադի, «Комсомолская  
Правда»-ում և տեղական մամուլում ըջիջի, դըպ-  
րոցի ու կոլտնտեսութեան աշխատանքը լուսա-  
բանող բրիգադի կազմակերպում և ալլն:

Այսքանով չի սպասվում դպրոցների և խմ-  
բակների գործնական աշխատանքը. ունկնդիր-  
ներին գործնական աշխատանքի ներգրավելու  
այլ ձևեր ու մեթոդներ շատ կան: Տեղական պայ-  
մաններից յեղնելով՝ հարկավոր է ընտրել հիմնա-  
կանն ու գլխավորը և դպրոցի ուժերի ճիշտ բա-

ժանուժ կատարել: Ընդ վորում անհրաժեշտ է տպահովել հետևյալը.

1. Կիրառվելիք միջոցառումները հիմնականում պետք է բղխեն տեղական և կուսակցական, կոմյերիտական ու հասարակական կազմակերպությունների, կոլտնտեսութեան, խորհրտեսուժեան, ՄՏԿ-ի ու գյուղի պլաններից և ոժանդակին վերջիններիս կատարմանը:

2. Կիրառվելիք յուրաքանչյուր միջոցառման ոգտակարութունը պետք է հասկացնել յուրաքանչյուր ունկնդրի:

3. Առաջադրությունները քննարկել ունկընդիրների ամբողջ կողմկտիվում:

4. Պատասխանատվութուն սահմանել ամեն մի հանձնարարութեան համար, դպրոցի առաջադրությունների լավագույն կատարման շուրջը մրցութուն կազմակերպել:

5. Առաջադրությունների կատարման ուղղութեամբ կատարված աշխատանքի արդյունքները թերթի, դրույցի և հաշվետվութեան միջոցով ցուցաբերել բոլոր ունկնդիրներին:

6. Բջիջները պետք է ապահովեն իրենց ղեկավարութունը դպրոցի գործնական աշխատանքի նկատմամբ և ամեն կերպ աջակցեն նրան:

7. Առաջադրությունները հիմնականում

պետք է կատարվեն կողկտիվ լեղանակով—բրիգադներով, 3—5 հոգուց բաղկացած խմբերով:

Քաղմինիմումի մշակման վողջ գործնական աշխատանքը պետք է կազմակերպել լերեք զըծով:

## 1. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ծանոթանալ խորհրդի, կոպերացիայի, ՓՈԿ-ի, Խրճիթ-ընթերցարանի և այլ աշխատանքների հետ:

Ստուգել կամավոր ընկերությունների աշխատանքը, տվյալ գյուղի ընդհանուր և ազրոտիկանիկական անզրագիտութեան վերացման գործը: Նպատակադրումը: Այս տեսակ աշխատանքի նըպատակն այն է, վոր ունկնդիրները տվյալ շըջանի և գյուղի աշխատանքի դրութեան մասին լավ ծանոթութուն ձեռք բերեն, գիտենան նրա թերություններն ու նվաճումները, մտենան նըրան և գործնականորեն լծվեն յեղած թերությունների ուղման աշխատանքին:

## 2. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ունկնդիրների մուտքը կոլտնտեսութուն, հարվածային բրիգադներ, տվյալ բջիջում, կոլտնտեսութունում և հասարակական կազմակեր-

պուլիտեաներում որինակելի աշխատանք կատարելու պարտավորութիւնն:

### 3. ԿՈՆԿՐԵՏ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ԲՐԻԳԱԴՆԵՐ

Կոյտնտեսութեան հավաքագրում, գրույցներ, ընթերցանութիւններ և գեղուցուցներ կուլեկտիվացման մասին, պատի թերթերի հրատարակում, աշխատանք հասարակական կազմակերպութիւններում, ոժանդակութիւն՝ չքավորութեան մեջ տարվող աշխատանքին, գյուղատնտեսական ինվենտարի նորոգման բրիգադներ, մասնակցել կոյտնտեսութիւնների պլանների կազմութեան աշխատանքին:

\* \*

Քաղմիսիմումի ուսումնասիրութիւնը հարկավոր է դնել թեորետիկական բարձր աստիճանի վրա, վճռական պայքար հայտարարել ֆլասակար գոհհկացման դեմ: ՀամԼԿՅՅՄ ԿԿ-ի լույս ընծալած դասագրքերից գուրս պետք է լայն չափով ոգտագործել՝

ա) Լենինի և Ստալինի գրքերը, մասնավորապես վեցհատորյակը և Լենինի գմի հարցերը:

բ) Կուսակցական, խորհրդային և կոմլեքիտական փաստաթղթերը—ՀամԿ(բ) Կ ԿԿ-ի, ՀամԼԿՅՅՄ ԿԿ-ի, Ժողկմխորհի, Կենտգործկոմի համագումարների, կոնֆերանսների, պլենումների վերոշումները և այլն:

գ) Լրագրական և տեղական նուլթեր:

Քաղմիսիմումի մեջ պետք է մտցնել նաև տեխնիկայի վորոշ տարրեր: Այստեղ խոսքը, իհարկե, գյուղատնտեսական տեխնիկայի և ագրուդրագիտութեան մասին չէ: Դրա համար կան գյուղատնտեսական խմբակներ, դասընթացներ և այլն: Քաղմիսիմումի մշակման ընթացքում հարկավոր է ունկնդիրներին տալ գյուղատնտեսութեան պլանավորման ու ռացիոնալացման գործի կազմակերպման հիմունքները, այդպիսին սերտորեն շարկապելով տվյալ քաղաքական հարցի հետ:

Որինակ, չերբ ուսումնասիրվում է Երկրի մի հարց, ինչպիսին է գյուղատնտեսութեան մեքինայացման, ինդուստրացման հարցը, հարկավոր է ունկնդիրներին պատկերացում տալ տրակտորների կարողութեան, նրանց արտադրողականութեան մասին, այն հեղափոխութեան մասին, վոր առաջացնում է տրակտորը գյուղատնտեսութեան մեջ:

Կուլեկտիվացման հարցն ուսումնասիրելիս,

անհրաժեշտ է գյուղական բջիջում շեշտը դնել այն առավելությունների նշանակության վրա, վոր ունի կոլեկտիվ տնտեսությունն անհատականի հանդեպ. իսկ կոլտնտեսության կից դպրոցում այդ շեշտը պետք է դնել աշխատանքի կազմակերպման, յեկամուտների բաշխման և պլանավորման վրա: Նման շերտավորված մոտեցում պետք է ունենալ նաև այլ հարցերի մշակման ժամանակ:

Ընդ վորում անհրաժեշտ է հիշել, վոր գլխավոր խնդիրը քաղաքական անգրագիտության վերացումն է. Չի կարելի թեքվել տեխնիկայի մանրամասն ուսումնասիրության կողմը: Այդ հարցերը հարկավոր է ուսումնասիրել միմիայն քաղաքական հարցերի սերտ առնչությամբ:

\* \*

Մեծ նշանակություն ունի այն հարցը՝ թե ինչպես պարապել: Կոմյերիտական խմբակների և դպրոցների աշխատանքի փորձը ցույց է տվել, վոր պարապմունքների լավագույն մեթոդը կենդանի զրույցն է:

Մյուս մեթոդների նկատմամբ (դասախոսություն, զրույց, հարց ու պատասխան և այլն) այս մեթոդի առավելությունն այն է, վոր ունեւորներն ակտիվ կերպով է ստանում ուսումնա-

սիրվող նյութը և բոլոր ունկնդիրները մասնակցում են քննարկմանը:

Կենդանի զրույցը քաղմիխիումի մշակման հիմնական մեթոդը պետք է լինի:

Պարապմունքները կենդանի զրույցի մեթոդով անցկացնելը հետևյալ չերեք մասերն ունի.

Ղեկավարի ներածական խոսք (10-15 րոպե) — Բացատրվում է պարապմունքի թեման, նպատակադրումը և այն հանգուցային հարցերը, վոր անհրաժեշտ է պարզաբանել տվյալ թեման մշակելիս:

Ղեկավարի հարցեր, ունկնդիրների պատասխաններ (զրույց). — Ղեկավարն ունկնդիրներին առաջադրում է այն հարցը, վոր ըստ նրա պլանի առաջինն է. ունկնդիրներից մեկը պատասխանում է, պատասխանի շուրջը զրույց է բացվում, մյուս ունկնդիրները լրացնում են պատասխանը, կամ թե չեն համաձայնվում, տվյալ հարցի մասին այլ տեսակետներ են հայտնում: Պրոպագանդիստը ղեկավարում է զրույցը: Յեթե հարցը անհասկանալի յե լինում ունկնդիրներին, ղեկավարը հարցը կրկնում է այլ, ավելի հասկանալի ձեւակերպումով (գլխի գցող հարց): Որինակ, «Լեւինի կուսակցությունը» թեման անցնելիս կարելի յե այսպիսի հարց տալ.

— Ի՞նչ քաղաքականութիւնն է վարում կուսակցութիւնը գլուղացիութեան նկատմամբ:

Յեթն ունկնդիրները չեն կարողանում այս հարցին պատասխանել, այն ժամանակ հարցը պետք է ստորաբաժանել, որինակ՝

— Ի՞նչպիսի քաղաքականութիւնն է վարում կուսակցութիւնը կուլակի, չքավորի, միջակի, կոլտնտեսականի նկատմամբ և այլն:

Առաջին հարցի լրիվ պարզաբանումից հետո դեկավարն ուղղում է անձիշտ պատասխանները, ընդհանուր յեզրակացութիւնն է հանում և անցնում է պլանի հաջորդ հարցին: Պլանի հարցերը պետք է սերտորեն շարկապել իրար և բըղխեցնել միմյանցից: Որինակի համար, վերցնենք նույն հարցը կուսակցութեան քաղաքականութեան մասին գլուղացիութեան նկատմամբ, կամ, ավելի ճիշտ, նրա մեկ մասը.

— Ի՞նչ քաղաքականութիւնն է վարում կուսակցութիւնը չքավորութեան նկատմամբ:

Այս հարցին ունկնդիրները կպատասխանեն, թե կուսակցութիւնը չքավորներին ոգնում է չափորդ հարցը, վոր տրամաբանորեն պետք է բղխի առաջինից, հետևյալն է.

— Ի՞նչպէս է կուսակցութիւնն ոգնում չքավորներին:

Այս հարցի պատասխանն ստանալուց հետո հեշտ է անցնել կոլեկտիվացմանը, վորպէս աշխատավոր գլուղացիութեան դրութիւնը բարելավելու հիմնական ճանապարհի և այլն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — Յերբ զրույցի պլանն սպառվում է և բոլոր հարցերի մշակումը վերջանում է, ղեկավարը զրույցի ամփոփում է տալիս, հիմնական հարցերի շուրջը յեզրակացութիւններ է հանում և տալիս է հաջորդ պարապմունքի առաջադրութիւնը (թեման, պարզաբանելի հարցերը և գրականութիւնն ընթերցանութեան համար):

Զրույցում պետք է լայն ոգտագործել ակնառու պիտույքներ— քարտես, դիագրամ, պլակատ, սխեմա, գեղարվեստական գրականութիւն: Իս աշխուժացնում է պարապմունքը և ավելացնում է ունկնդիրներին՝ նյութն ըմբռնելու ունակութիւնը: Որինակ, «Լեհիսի կուսակցութիւնը» թեման մշակելիս իբրև ակնառու ձեռնարկ կարելի յի ոգտագործել կուսակցութեան կառուցվածքի սխեման, գեղարվեստական գրքեր (Պանֆերովի «Бруски» վեպը և այլն):

«Իստակարգային պայքար» թեմայի շուրջը կարելի յի ընթերցել առանձին կտորներ Գորբուսովի «Ледолом» վիպակից, վորոնք ցատուս կեր-

պով ցուցց են տալիս կուլակութեան դիմադրու-  
թեանը սոցիալիստական շինարարութեան գոր-  
ծին, Խորոզուչենկոյի «Большая Каменка»-ից և  
այլն: «Ի նչ ե հարհրդային իբխանութեանը» թե-  
մայի առթիվ իրբե ակնառու ձեռնարկ կարելի չե  
ոգտագործել Խորհրդային իշխանութեան կառուց-  
վածքի սխեման, պլակատներ: Դրանից բացի,  
հարկավոր ե հավաքել առանձին հարցերի վերա-  
բերյալ վոլջ տեղական նյութերը—կուսըջիջի աշ-  
խատանքը, գյուղխորհրդի, կոոպերացիայի, խըր-  
ձիթ-ընթերցարանի, դպրոցի աշխատանքը և այլն,  
—լավ ձեռակերպել դիագրամներով, սխեմաներով  
և այլն:

\* \* \*

Պարապմունքները կենդանի զբույսի մեթո-  
դով անցկացնելն իմաստ կունենա միայն այն  
ժամանակ, չերբ պրոպագանդիստ կա: Իսկ մենք  
գիտենք, վոր գյուղական բոլոր դպրոցներն ա-  
պահովելու համար անհրաժեշտ քանակութեամբ  
պրոպագանդիստներ չկան: Ի՞նչպես վարվել այն  
տեղերում, ուր պրոպագանդիստ չկա: Այդպիսի  
դեպքում հարկավոր ե լինում դպրոցը կազմա-  
կերպել առանց պրոպագանդիստի: Այդպիսի դեպ-  
քոցներ շատ կան կոմյերիտմիութեան բազմաթիվ  
գյուղական բջիջներում և կոչվում են քաղընթեր-

ցանութեան: Քաղընթերցանութեանը դպրոցից  
կամ խմբակից տարբերվում ե նրանով, վոր նա  
աշխատում ե առանց պրոպագանդիստի: ՀամԼԿՅՆՄ  
ԿԿ-ի լույս ընծայած դասագիրքը զգալի չափով  
հեշտացնում ե այդպիսի ընթերցանութեան աշ-  
խատանքը, վորովհետև կազմված ե հարց ու պա-  
տասխանի ձևով:

Քաղընթերցանութեանը պետք ե անցկաց-  
նել նույն մեթոդով, ինչ քաղդպրոցումն ե, այն  
ե՛ կենդանի զբույսի մեթոդով: Կազմակերպչա-  
կան աշխատանքի համար քաղընթերցանութեան  
ուսկնդիրներն (10-15 հոգի) ընտրում են մի ա-  
վագ, վորը հաշվառման ե յենթարկում հաճա-  
խունները, պարապմունքի համար շինք ե ճա-  
բում, հայտարարութեան ե տալիս պարապմունքի  
որվա և տեղի մատին և այլն:

Քաղընթերցանութեան պարապմունքները կա-  
տարվում են հետևյալ կերպ.

- 1) նյութի ընթերցանութեան դասագրքից.
  - 2) քննարկում, 3) գրավոր պատասխան:
- Ընթերցանութեանը կատարում ե ամենից  
ավելի զբաղեա ընկերներից մեկն ու մեկը. մյուս-  
ները լսում են ու հետևում իրենց դասագրքերով:  
Գրքով հետևելը պարտադիր ե, վորովհետև այդ  
դեպքում նյութը ավելի լավ կարելի չե ըմբռնել:

Այս կամ այն հարցը պարզաբանող վոչ մեծ մի հատված ընթերցելուց հետո, ուկնդիրները կուլ-լեկտիվ կերպով քննարկում են այն և կոլեկտիվ պատասխանը գրի լեն առնում տեւորակում:

Այս ձեւի ուսուցման պակասութիւնն այն է, վոր ունկնդիրները կարող են վոչ ճիշտ կամ վոչ լրիվ պատասխաններ տալ: Ինչպես վարվել այդ դեպքում առանց պրոպագանդիստի: Քաղընթերցանութիւնը բոլորովին առանց զեկավարութեան տանել, իհարկէ, չի կարելի: Կոմիտեի ամիութեան շրջանային կոմիտեները պետք է ցույց տան այդ զեկավարութիւնը: Հարկավոր է քաղընթերցանութեան ամեն մի խմբակին կամ 2-3 այդպիսի խմբակների մեկ կոնսուլտանտ ամրացնել: Շրջկոմին յենթակա այդ կոնսուլտանտի խնդիրն է՝

1. Հրահանգներ տալ ունկնդիրներին այն մասին, թե ինչպես հարկավոր է գրքի վրա աշխատել (քանակոր ու գրավոր խորհուրդներ և ցուցմունքներ):

2. Քաղընթերցանութեան պատասխանների դնահատականը տալ, ուղղել սխալները:

3. Կով կլինի, վոր կոնսուլտանտը անցկացնի թեմայի չեզբախակման պարապմունքը: Որինակ, տասնորյակում քաղընթերցանութեան մեկ պարապմունք ունենալիս՝ քաղմիտիմումի առաջին

թեման մշակվում է յերեք պարապմունքի ընթացքում, իսկ չորրորդ պարապմունքը կարելի չէ տալ կրկնութեան: Շրջանային կամ փնջային (кучевой) կոնսուլտանտը դալիս է և անցած նշութի մասին գրույց է ունենում:

Այս դեպքում ևս պրոպագանդիստների և կոնսուլտանտների հաստատուն կադր է պահանջվում:

Վերտելից գտնել այդպիսին:

• Հարկավոր է ոգտագործել կազմակերպութեան գրագետ անդամներին—պլուգերիտների աշակերտներին, ուսուցիչներին, խրճիթվարներին, արձակուրդի յեկած ուսանողներին, շրջկոմի կոնսուլտանտներին, այս գործին մասնակից դարձնել կուսըջիշին:

Կոմիտեի ամիութեան շրջանային կոմիտեները պետք է կազմակերպեն նշանակված պրոպագանդիստներին և կոնսուլտանտներին, նրանց կարճատե 3-որչա կամ 5-որչա դասընթացներով անցկացնեն:

Այս դասընթացներում պետք է մշակման յենթարկել մոտավորապես հետեւյալ հարցերը.

1. Քաղմիտիմումի մեջ մտնող հարցերի շրջանակը (ավելի բարձր մակարդակով):

2. Ի՞նչպէս անցկացնել քաղմինիմումի պարապմունքները:

ԱՄԵՆ ՄԻ ԲՁԻՁ ՊԵՏՔ Ե ՈՒՆԵՆԱ  
ՈՒՍԿԱԶՄ ԱԿԵՐՊԻՁ

Քաղանդաբազիության վերացման հիմնական աշխատանքը պետք է կենտրոնացնել ըջիջում:

Յեթե ըջիջը կարողանա քաղմինիմումի մըշակման գործը կազմակերպել, ապահովել ուսուցման ղեկավարութիւնը, ապա քաղանդաբազիության վերացման հաջողութիւնն ապահովված կլինի: Մեր կոմյերիտական քաղկթության թեքաղաքային և թե գյուղական ցանցի աշխատանքում ըջիջային ղեկավարութիւնը ամենաթույլ ողակներից մեկն է կազմում:

Ահա թե ինչո՞ւ ՀամլիՅԵՄ ԿԿ-ի վորոշումը բոլոր կոմյերիտական կազմակերպութիւններին պարտավորեցնում է — «քաղաքականապէս ամենից ավելի զարգացած կոմյերիտականներից և ըջիջների բյուրոները անգամներից բոլոր ըջիջներում առանձնացնել քաղուսուցման կազմակերպիչներ, վորոնց պարտականության մեջ մտնում է ըջիջների քաղուսուցման կազմակերպումը և քաղմինիմումի մշակման ամենորոյա վերահսկողութիւնը»:

ԲՁԻՁԱՅԻՆ ԿԱԶՄ ԱԿԵՐՊՁԻ ԱՌԱՋ ԽՈՇՈՐ  
ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ԴԻՎԱԾ

Բջիջային կազմակերպիչը պետք է հաշվառման լենթարկի բոլոր քաղաքականապէս անդրապետ կոմյերիտականներին և կոմյերիտականներին ու անկուսակցական լերիտասարգներին հավաքաբար քաղմինիմումի դպրոցները:

Հավաքագրումը պետք է անցկացնել կարմիր անկուսում կամ դաշտային աշխատանքների տեղում գրույցներ կազմակերպելու, ինչպէս նաև անհատական խոսակցութիւնների միջոցով: Ամեն մի կոմյերիտականի պետք է բացատրել քաղաքական գրաբազիության մակարդը բարձրացնելու, քաղմինիմումն անցնելու անհրաժեշտութիւնը:

Քաղաքականապէս անդրաբեռների հաշվառումն ավարտելուց հետո, կազմակերպիչը պետք է ժամանակին դասադրքերի և գրականության հաշտ ներկայացնի շրջկոմին, պարապմունքների համար շէնք վորոնի, հեռավորության պատճառով դպրոց հաճախելու հնարավորութիւն չունեցող կոմյերիտականների համար կոնսուլտանտ գտնի:

Կազմակերպչին ոգնելու համար յուրաքանչյուր ըջիջում նշանակվում է մի ավագ, վորը

դպրոցի քարտուղարն և լինում և հաճախումները  
հաշվառում և կատարում, պարապմունքներ և կազմակերպում և այլն:

Իջիջալին կազմակերպիչը մշակախան կապ  
պետք և պահպանի շրջկոմի, կուսբջիջի և շեֆերի  
հետ:

Իջիջալին կազմակերպիչի խնդիրն է՝ վարել  
քաղաքագրադիտության վերացման ղեկավարման  
վողջ աշխատանքը, վերացնել հաջող ուսուցման  
համար խոչընդոտ հանդիսացող բոլոր մանրուք-  
ները, ուսուցումը հարմարեցնել ամառնային աշ-  
խատանքին (բրիգադային ուսուցում դաշտում և  
այլն), դպրոցի աշխատանքը համապատասխան  
դարձնել կոմյերխտակա՞ն բջիջի որացուցային պը-  
լանին, ոգնել պրոպագանդիստին նրա աշխատան-  
քի ընթացքում:

Ուսկազմակերպիչ նշանակելով վոյ մի դեպ-  
քում չի վերանում ամբողջ բջիջի պատասխանա-  
վությունը քաղուսուցման համար: Քաղանգրա-  
դիտության վերացման գործի ձախողման դեպ-  
քում առաջին հերթին պատասխանատու յե ամ-  
բողջ բջիջը:

Քաղուսուցումը լավագույն ձևով կազմակեր-  
պելու նպատակով բջիջը ուսուցման ընթացքում  
գպրոցի ունկնդիրների հետ մասսայական ձև-

նարկումներ պետք և կազմակերպի, որինակ՝ ու-  
սուցման չերեկոներ, քաղպայքաբ, քաղվիճակա-  
խաղ, քաղթակարդ և այլն, սահմանելով հատուկ  
պարզկներ: Քաղյերեկոները կազմակերպվում են  
սովորաբար 1 և կեսից չերեկու ամիսը մեկ ան-  
գամ, առաջինը բացատրական-հավաքագրական  
կամպանիայի ժամանակ, յերկրորդը նվիրվում է  
ուսուցման սկզբնավորության, վերջինը՝ քաղմի-  
նիմումի մշակման ամփոփումներին: Այլպիսի յե-  
րեկոները պլանը մտատորապես հետևյալն է.

1. Զեկուցում (քաղմինիմումի նշանակու-  
թյան, ուսման ընթացքի մասին, դպրոցի ղեկա-  
վորի հաշվետվություն և այլն):

2. Գեղարվեստական մաս (բեմադրություն,  
արտասանություններ, սլամովածքներ և այլն):

3. Մաղեր (քաղպայքաբ, քաղվիճակախաղ,  
քաղթակարդ և դվարձալի խաղեր):

Քաղցանցի աշխատանքի պրակտիկայում ա-  
ռանձնապես տարածված է կաղպայքաբ: Քաղպայ-  
քաբը հնարավորություն է տալիս չերևան հանել  
երիտասարդության և կոմյերխտականների քա-  
ղաքական դիտելիքները:

Մոփորել չցանկացողների, պարապմունքնե-  
րին չհաճախողների վերաբերմամբ կարելի յե դա-

տեր կնգմակերպել: Նրանք մեծապես ներգործում են:

Ընկ. Կլեպովը „Комсомольский агитпроп работник“ ժուրնալում հետևյալ կերպ է նկարագրում Տյումենի կառուցողների ակումբում կայացած «քաղաքաբնակիչների» դատավարութունը.

«Իատարանը գալիս ե: Խնդրում եմ վոտքի կանգնել:

Յե՛վ մեկը մյուսի յետևից վոտքի յեն կանգնում Տյումենի կառուցողների ակումբի կոմյերիտականների, ուշադրութլամբ դիտելով մեղադրյալներին—քաղաքացի պարապմունքների գործաւիքների դեմքերը:

Մեղադրյալների աթոռի վրա յեն հինգ հոգի —Պոնոմաբե, ՀամլկՅՅՄ անդամ 1929 թվից, սոցիալական դրութլամբ բանվոր: Դպրոց չի հաճախել վեց անգամ: Քաղաքականապես զարգացած չե, թերթ չի կարդում: Հասարակատն աշխատանք չի տանում, պատճառաբանելով, թե «բջիջը աշխատանք չի ավել, ինքս ել չեմ վերցրել»:

Պանֆերովա—ՀամլկՅՅՄ անդամ 1927 թըվից, սոցիալական դրութլյան մասին ինքն ասում ե—«հայրս պուղացի չե, լեղրաչրս առևտրական, քուչրս առևտրական, փեսաս քաղաքսորական ե հղել, վերջերս ե լեկել Նաբեժնիսկ»։ Մտողների

հետ իր կապը չի կտրել: Քաղաքացի չի հաճախել 5 անգամ: Դատարանի առաջ ե շարտել իր կոմյերիտական տոմսը: Քաղաքականապես վատ ե զարգացած: Սովորել չի ցանկանում:

Հետևյալը՝ Բասովա—ՀամլկՅՅՄ անդամ 1925 թվից: Դպրոց չի հաճախել 11 անգամ, պատճառաբանելով թե «գլտելիքները դժվար են գլուխը մտնում»:

Վերջինները՝ Գուրին—ՀամլկՅՅՄ անդամ 1926 թվից, սոցիալական դրութլամբ բանվոր: Քաղաքացի չի հաճախել 11 անգամ, վոչ մի հասարակական աշխատանք չի կատարել: Նովոսելովս—ՀամլկՅՅՄ անդամ 1928 թվից, սոցիալական դրութլամբ բանվորուհի: Բեռնավորում չունի: Քաղաքացի չի հաճախել 8 անգամ, պատճառաբանելով, թե ժամանակ չունի:

Նրանց դատ ե սպասում:

Ակմբային բեմի վրա, դատավորների սեղանի յետևում, լուռ տեղավորվում են բջիջի բյուրոյի ներկայացուցիչները, խիստ հայացքով դիտելով իրենց ընկերներին:

— Այստեղ, — ասում ե դատարանի նախագահ Դրուժինիան, — մեր առաջ նստած են հինգ այնպիսի կոմյերիտականներ, վորոնք չնալած յերկու տարի կոմյերիտութլյան մեջ են գտնվում,

բայց մինչև որս չգիտեն, թե ումն և պատկանում  
բարձրագույն իշխանութունը ԽՍՀՄ-ում: Հիմա  
մենք պետք և պարզապես, կոմյերիտականի  
նման, առանց դատը տիկնիկային կատակերգու-  
թյան վերածելու, պարզինք, թե ինչպիսի պատ-  
ճառներ ելին, վոր խանգարում ելին ընկերներին  
պարագելու, ինչն է, վոր նրանց մեջ անտարբեր  
վերաբերմունք է առաջացրել ուսուցման հան-  
դես, ինչն է նրանք չեն հաճախում քաղաքացի  
պարագմունքներին: Առաջին խոսքը տալիս եմ  
Պոնոմարեվին:

Մեղադրական ախտից բարձրանում է Պո-  
նոմարեվը:

— Առաջ չեմ սովորել: Լքել եմ պարագ-  
մունքները, — շեշտում է նա: Յեվ ժամանակ ել  
չունիս սովորելու: Աշխատանքի ընթացքում  
տանջվում ես, տուն ես գալիս, կամենում ես  
հանգստանալ, բայց արի տես, վոր առանց շո-  
րերդ փոխելու պարտավոր ես վազ տալ պորագ-  
մունքի: Մտածում ես, մտածում, և չես դնում:  
Իսկ յերբ քիչ ու միչ հանգստանում ես, արդեն ուշ  
է լինում:

Նրանից հետո դուրս են գալիս մյուս մե-  
ղադրյալները: Մեղադրյալներից հետո նրանց  
հանցանքի մասին մանրամասն բացատրություն-

ներ են տալիս վկաները — բլիշի ազիտպրոպլը,  
քարտուղարը: Վոչ մեծ մեղադրական ճառ է աս-  
ում կոմյերիտական դատախազը, նրանից հետո  
պաշտպանն է հանդես գալիս, և դատարանը հե-  
ռահում է խորհրդակցության:

Տասը ըոպեյից հետո ընթերցում են դատա-  
վճիռը:

Դատարանը գտավ, վոր քաղաքացի հաճա-  
խելու համար ամեն մեկը ժամանակ ունի, վո-  
րովհետև բոլորն ել աշխատանքից դուրս են գա-  
լիս ժամի 4<sup>1</sup>/<sub>2</sub>-ին: Մտքերի փոխանակության  
ժամանակ արտահայտվողները նախատինք ելին  
կարգում բոլոր նրանց հասցեյին, ովքեր խուսա-  
փում են հեղափոխական թերթի անսովորելուց:

Դատարանը վորոշեց — խնդրել բլիշին, վոր  
Պոնոմարեվին, Բասովային և Գուբինին արժա-  
նացնի հանդիմանության, Նովոսելովային ի ցույց  
դնել, Պանֆերովային՝ քաղաքացի չհաճախելու  
և սոցիալական ծագումը թաքցնելու համար վտա-  
րել կոմյերիտմիությունից»:

Քաղմինիմումի մշակման ամբողջ աշխա-  
տանքը պետք է լուսաբանել տեղական պատի  
թերթում և շրջանային մամուլում: Դա հնարա-  
վորություն կտա թերթի միջոցով կոմյերիտա-  
կանների և յերիտասարդության ուղադրությունը

մորիլիզացիայի յենթարկել քաղաքագրատու-  
թյան վերացման շուրջը:

Մեզ մոտ շատ և տարածված այն կարծիքը,  
թե ամառը քաղուսուցում կազմակերպել չի կա-  
րելի, վորովհետև «վոչինչ դուրս չի գա»:

Հարկավոր է վճարբար պայքարել այսպիսի  
տրամադրությունների դեմ: Բանն այն է, վոր  
կոմյերիտական բջիջները դեռևս չեն սովորել ի-  
րենց աշխատանքը զանազան պայմանների հար-  
մարեցնել, աշխատանքի ընթացքում վերադասա-  
վորվել:

Այսպիսի տուարկումներ են հանդես բերում,  
թե «Ամառը չերիտասարդությունը ամբողջ ժա-  
մանակ դաշտային աշխատանքի յե, սովորելու  
ի՞նչ ժամանակն է: Ո՞վ է ամռանը պարապում:  
Հարկավոր է ուրախ ժամանակ անցկացնել»:

Այսպիսի տրամադրությունների վնասակա-  
րությունն ակնհայտ է: Մենք շատ որինակներ  
ունենք, յերբ ամառային աշխատանքների ժա-  
մանակ գյուղական բջիջները քաղուսուցում են  
կազմակերպում:

Յեթե ձմռանը բջիջը ուսուցումը կազմա-  
կերպում է դպրոցում, խրճիթ-ընթերցարանում,  
կարմիր անկյունում, ապա ամռանը այդ հնա-  
րավոր չէ: Այդպիսին պետք է կազմակերպել  
դաշտում, աշխատանքի վայրում, բրիգադում:

Այդ առանձնապես հարմար և կազմակեր-  
պել խոշոր կոլտնտեսություններում և խորհրդն-  
տեսություններում, յերբ կոլտնտեսականներն  
ու խորհրտնտեսությունների բանվորները, ինչպես  
ասում են, որ ու զիշեր դաշտումն են անցկաց-  
նում:

Ամենից ավելի նպատակահարմար ձևը բրի-  
գադային ուսուցումն է: Դա հնարավորություն է  
առաջ կերպով հավաքել ունկնդիրներին  
և լավագույն կերպով կազմակերպել գործնական  
աշխատանքը:

Տասնորյակում մեկ-յեզկու պարապմունքը  
շատ ժամանակ չի խլի մեր յերիտասարդներից,  
«ման դալու և վարձանալու» համար բավական  
ժամանակ է մնում:

## ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՇՐՋԿՈՄԸ ՂԵԿՍՎԱՐԻ ՔՍՂՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Կոմյերիտական քաղկրթական ցանցի աշ-  
խատանքի փորձը ցույց է տվել վոր քաղուսուց-  
ման կազմակերպման գործում ղեկավարությունը  
վճռական նշանակություն ունի: Այդ առանձնա-  
պես ցայտուն կերպով հաստատում է 1929 30 թ.  
փորձը, յերբ կոմյերիտական կազմակերպու-  
թյունների մեծ մասում ղեկավարության թուլու-

թխան շնորհիվ քաղուսուցման գործը տասարվեց նույնը մենք նկատում ենք նաև ներկա ուսումնական տարվա սկզբին: Քաղկրթական ցանցի ծավալման թույլ առնպերն այս աշնանը հետեւանք ելին այն բանի, վոր մի շարք կազմակերպութիւններ ղեկավարները ոպորտուն խտական թերագնահատութիւն հայտաբերեցին քաղկրթության հանդեպ:

«Ժամանակ չունենք քաղուսուցմամբ զբաղվելու, հարկավոր ե ճեղքվածքները վերացնել»:  
«Ի՞նչ ուսման ժամանակն ե, չերբ գարնանացանն ե սկսվում»:

Քաղկրթության թերագնահատման այդպիսի տրամադրութիւններ ժասին ե խոսում ՀամկԿՅԵՄ ԿԿ-ի հսկաների 20-ի վորոշումը:

Կնտրոնական կոմիտեն արձանագրում եր, վոր բացահայտորեն չեն հասկանում այն վիթխարի դերը, վոր ունի քաղկրթութիւնը մասսաներին մոբիլիզացիայի յեն թարկելու, սոցիալիստական շինարարության համար մղվող պայքարում նրանց ակտիվ մասնակից դարձնելու, հերթական տնտեսական-քաղաքական կամպանիաներն ու խնդիրները լուծելու գործում: Ղեկավարութիւնը չկարողացավ թերիտիկական շարժման ծավալման խնդիրները զուգորդել կուսակցության և

կոմյերիտմության տնտեսական կուսուրական ու քաղաքական խնդիրներ լուծմանը, չկարողացավ քաղկրթութիւնն ոգտագործել այդ խնդիրների լուծման համար:

Ղեկավարութիւնը քաղկրթության կազմակերպման հիմնական ողակն ե: Ըիշտ ղեկավարութիւնը մեծ նշանակութիւն ունի գյուղական կոմյերիտականների քաղանգրագիտության վերացման խնդրին լուծում տալու համար, այն կապակցությամբ, վորնա պետք ե իրագործվի վեց ամսվա ընթացքում:

Յուրաքանչյուր գյուղական շրջկոմ պետք ե հաշվի առնի այդ և ապահովի քաղանգրագիտության վերացման սխտեմատիկ ղեկավարութիւնը, մշտական վերահսկողութիւնը և կատարման ստուգումը: Առանց դրա՝ անիմաստ կլինի գյուղական կոմյերիտականների քաղանգրագիտության վերացման մասին ՀամկԿՅԵՄ-ի IX համագումարի ընդունած վորոշումների իրագործումը:

Կարն ժամանակում բարձր վորակ սալ: Այդ լուզունգով պետք ե կառուցել քաղմինիմումի ղեկավարման գործը: Քաղանգրագիտության վերացման գործի ղեկավարության խնդիրները հետեւյալումն են կայանում:

1. Ապահովել գյուղական կոմյերիտականներ-

րի վողջ մատայի քաղանգրագիտութեան վերացումը:

2. Ապահովել ցանցի անխափան աշխատանքը, պատշաճ թեորիտիկական մակարդակը և թեորիայի շաղկապումը սոցիալիստական շինարարութեան պրակտիկայի հետ:

Այս տեսանկյան տակ է, վոր պետք է կազմակերպել քաղանգրագիտութեան վերացման ցանցի աշխատանքի վերահսկողութիւնը, ընդունված վորոշումների կատարման ստուգումը:

Քաղկրթութեան գոյութիւնն ունեցող ամբողջ ցանցը — քաղընթերցանութիւնները, ընթացիկ քաղաքականութիւնն ուսումնասիրող խմբակները և այլն — անհրաժեշտ է վերակազմել և դարձնել քաղմիտիմովի դպրոցներ ու ընթերցանութեան խմբակներ: Քաղանգրագիտութեան վերացման գործը ղեկավարելու ուղղութեամբ շրջկոմի կատարելիք աշխատանքը պետք է խիստ կոնկրետացնել:

Այդ աշխատանքն իր մեջ պարունակում է հետևյալը.

1. Ազիտացիոն-բացատրական աշխատանք. — Կոմյետիտիտիւթեան շրջանային կոմիտեները քաղանգրագիտութեան վերացման հարցը մշակման պետք է լինթարկեն յուրաքանչյուր պոլիտկան,

կոլտնտեսական և խորհտնտեսական բջիջում Բջիջներն ուղարկվելիք զեկուցողներին պետք է հրահանգներ տալ, զեկուցման համար թեզիսներ առաջադրել, ծանոթացնել քաղանգրագիտութեան վերացման մասին շրջկոմի ընդունած պլանի հետ:

Ազիտացիոն-բացատրական աշխատանքի մեջ մտնում է հետևյալը.

ա) Բացատրել քաղանգրագիտութեան վերացման նշանակութիւնը:

բ) Բացատրել, թե ինչ է աւելիս քաղմիտիմովը, ինչպես կազմակերպել նրա ուսումնասիրութիւնը:

Միմիայն հարցը ժողովում ղեկով չպետք է բավականանալ: Անհրաժեշտ է զրույցներ կազմակերպել կարմիր անկոլունում, գաշտում, ինքնագործունեյութեան լեռեկոներում և քաղուսուցմանը նվիրված հարուկ լեռեկոներում:

Շրջկոմի ձեռնարկումներից մեկը պետք է լինի՝ լավագոյն բջիջի, քաղանգրագիտութեան վերացման լախուրն դպրոցի կոնկուրս կազմակերպել, սահմանելով 2—3 պրեմիա (զրականութիւն, գլուխտնտեսական գործիքներ, փոխանցիկ դրոշակ): Յեթե քաղանգրագիտութեան վերացման աշխատանքի սկզբնական շրջանում այդ-

պիսի կոնկուրս կազմակերպլի, ապա նա կարող  
ե խոշոր դեր խաղալ քաղուսուցման ծավալման  
գործում:

2. Բացատրական աշխատանքի սերտ կապակե-  
ցութեամբ անհրաժեշտ ե կազմակերպել դպրոցի  
և խմբակի ունկնդիրների հավաքագրման գործը:

3. Ուսուցման համար նյութական բազա ստեղ-  
ծել.— Դպրոցները լավ կաշխատեն, չեթե նրանք  
ապտոնոված լինեն գրականութեամբ, դասագրքե-  
րով, շենքով: Շրջանային կոմիտեները պետք ե  
ժամանակին գրականութեան հայտ ներկայացնեն:

4. Կազմակերպչական յեվ մեթոդական ղեկավա-  
րութիւն.— Քաղանգրագիտութեան վերացման  
աշխատանքի հետագա ղեկավարման համար շրջա-  
նային կոմիտեները կից պետք ե համախմբել շրջանի  
կենտրոնում ապրող մի խումբ գրագետ կոմյե-  
րիտականներ և նրանց միջոցով վերահսկողու-  
թիւն ունենալ բջիջների և դպրոցների աշխա-  
տանքի վրա:

Այդպիսի բրիգադը կոչնի շրջկոմին մշտա-  
կան վերահսկողութիւն, կատարման ստուգում և  
բջիջների հետ կենդանի կապ ստանանելու, ինչ-  
պես նաև ուսուցման կազմակերպման ուղղու-  
թեամբ բջիջներին ամենորլա ոժանդակութիւն  
ցուլց տալու գործում: Ժամանակ առ ժամանակ

բրիգադին կոնկրետ առաջադրութիւն պետք ե  
տալ ուսուցման ընթացքը ստուգելու համար:  
Այդ առաջադրութիւնները մտտավորապես հար-  
ցերի հետեյալ շրջանակն են ընդգրկում:

1) Ի՞նչպես ե դպրոցը մասնակցում կուտնտե-  
սութեան ամրացման գործին:

2) Ի՞նչպես ե բջիջը ղեկավարում դպրոցը:

3) Ի՞նչ գրականութեամբ են ընթանում դպ-  
րոցի պարապմունքները:

4) Ի՞նչպես են ունկնդիրները հաճախում  
պարապմունքներին, մասնակցում հարցերի քն-  
նարկմանը:

5) Ի՞նչպես ե պրոպագանդիստը ղեկավարում  
դպրոցը եսլն:

Այս բոլոր ձեռնարկումների նպատակահար-  
մարութիւնից հետք անգամ չի մնա, չեթե ստաց-  
ված նյութերը փակված մնան ապիտարովի դա-  
րակում, աշխատանքի ընթացքում նկատված թե-  
րութիւնները տեղն ու տեղը չվերացվեն:

Քաղմինիմումի դպրոցների պրոպագանդիստ-  
ների համար անհրաժեշտ ե կոնսուլտացիա կամ  
հատուկ սեմինար կազմակերպել, վորտեղ պետք  
ե մշակվեն քաղուսուցման մեթոդիկայի և բու-  
վանդակութեան հարցերը: Այդպիսի սեմինարի  
խնդիրն ե:

ա) պրոպագանդիստին հրահանգներ տալ զը-  
րույցի բովանդակութեան շուրջը:

բ) Պրոպագանդիստին հրահանգներ տալ պա-  
րապմունքի մեթոդիկայի շուրջը (զրույցի պլա-  
նը, ունկնդիրների գործնական աշխատանքի կազ-  
մակերպումը, տեղական նյութերի հետ շաղկա-  
պելը, գեղարվեստական գրականութեան ոգտա-  
գործումը):

գ) Դպրոցների միջև աշխատանքի փոքրի փո-  
խանակութեամբ կազմակերպել:

Սեմինարի և կոնսուլտացիաների ղեկավար-  
ման աշխատանքին պետք է ներգրավել վորակյալ  
պրոպագանդիստ-մեթոդիստների: Այս տեսակե-  
տից կուսկոմները պետք է ոգնեն կոմյերիտմիու-  
թեան շրջկոմներին, պաբտավորեցնելով, որինա-  
կի համար, շրջանային կուսպրոպագանդիստնե-  
րին՝ ղեկավարելու սեմինարը և կոնսուլտացիա-  
ներ տալու:

Այս քանով, ի հարկե, չի սպառվում շրջկոմի  
անելիքը քաղուսուցման կազմակերպչական ու  
մեթոդական ղեկավարման խնդրում: Շրջկոմը  
պետք է աշխատի, վոր չուրաքանչյուր բջիջում  
քաղուսուցման կազմակերպիչ նշանակվի, այդ  
կազմակերպիչների մեջ աշխատանք կատարի ա-  
ռանձին հարցերի շուրջը (հավաքագրում կոմպ-

լեկտավորում, գործնական աշխատանքի ղեկա-  
վարութուն, փորձի փոխանակում և այլն) կազ-  
մակերպիչների խորհրդակցութուններ հրավիրի:

Դրանից բացի, հարկավոր է քաղուսուցման  
հարցի շուրջը լայն խորհրդակցութուններ հրա-  
վիրել, վորտեղ դնել բջիջներ, դպրոցներ և  
ուսկազմակերպիչների հաշվետվութունները, հրա-  
վիրել ունկնդիրներին փնջային կոնֆերանսներ,  
շրջկոմի բյուրոյի նիստում լսել բջիջների հաշ-  
վետվութունները քաղանգրագիտութեան վե-  
րացման ընթացքի մասին:

Կոմյերիտմիութեան շրջանային կոմիտեները  
պետք է սերտորեն կապվեն կոմյերիտմիութեան  
քաղաքային շեֆկազմակերպութունների հետ:

### ՔԱՂԱՔԸ ՊԵՏՔ Ե ՈԳՆԻ ԳՅՈՒՂԻՆ

Վեց ամսվա ընթացքում գյուղական կոմյերի-  
տականների քաղաքական անգրագիտութունը  
վերացնելը մարտական խնդիր է:

Միմիայն գյուղական կազմակերպութուննե-  
րի ուժերով այս խնդիրը վոչ մի ղեպում գլուխ  
գալ չի կարող: Անա թե ինչու ՀամԼԿՅԵՄ 1X  
համագումարն ընկ. Սալտանովի ղեկուցման առ-  
թիվ վորոջեց՝

Պարտավորեցնել ՀամկԿՅԵՄ-ի բոլոր գործարանային ու քաղաքային բլիշներին ոգնելու գյուղի կոմյերիտական բլիշներին, վերցնելով կոմյերիտմիության գյուղական բլիշների շեֆությունը այն աշխատանքում, վոր կատարում են վերջոններս կոլեկտիվացման և կոլտնտեսությունում արտադրական աշխատանքի կազմակերպման գծով, կազմակերպելով նրանց քաղաքական կրթության գործը, այդ նպատակով չենթաշեֆ բլիշը մշտական կամ ժամանակավոր աշխատանքի համար լավագույն ակտիվիստների ուղարկելով, անհրաժեշտ նյութական ոգնություն կազմակերպելու, առաջին հերթին գրականություն հասցնելու գործին ոժանդակելով և այլն

Պրոլետարական շեֆկազմակերպությունները պետք է պատասխանատու լինեն յենթաշեֆ բլիշների աշխատանքի գրության համար:

Համագումարը գտնում է, վոր բանվոր կոմյերիտականները առաջատար հեղափոխական դեր պետք է կատարեն և իրոք կատարում են գյուղի կոմյերիտմիության աշխատանքը նոր, ավելի բարձր տատիճանի վրա դնելու գործում:

Ահա, թե ինչպիսի պարտականություններ առաջադրեց համագումարը քաղաքային կոմյերիտմիությանը:

ՀամկԿՅԵՄ ԿԿ-ի սթ մարտի 31-ի վորոշումը նշեց մի շարք գործնական միջոցառումներ, վոր պետք է կիրառեն քաղաքային բլիշները քաղանգրագիտության վերացման գծով գյուղական բլիշներին ոժանդակություն ցույց տալու ասպարիղում:

Այս վորոշման համաձայն, քաղաքային կազմակերպությունները մշտական աշխատանքի համար (առնվազն 1 տարի) գյուղին տալիս են 1200 կոմյերիտական, իբրև պրոպագանդիստ կազմակերպիչներ (վորից 200 հոգու մորիլիզացիայի չե յենթարկում կենտրոնական կոմիտեն, իսկ 1000 հոգու՝ տեղական կազմակերպությունները):

ԿԿ-ի միջոցով մորիլիզացիայի չենթարկվող 200 պրոպագանդիստներից շրջաններն են ուղարկվում 170 հոգի, իսկ կոլտնտեսություններն ու խորհատեսությունները՝ 30 հոգի: Կազմակերպությունների ներսում մորիլիզացիայի չենթարկվող պրոպագանդիստները հիմնականում ուղարկվում են աշխատելու կոլտնտեսություններում, խորհատեսություններում և ՄՏԿ-ներում: ԿԿ-ի կողմից ուղարկվող պրոպագանդիստները առաջին վեց ամսվա ընթացքում աշխատում են անմիջապես քաղաքական անգրագիտության վերացման գծով: Տեղական կազմակերպություններն

իրավունք չունեն նրանց այլ աշխատանքի համար ոգտագործելու: Մնացած վեց ամիսը պրոպագանդիստներն աշխատելու չեն շրջանի քաղուսուցման գործը կազմակերպելու և ղեկավարելու գծով:

Իհարկե, 1200 պրոպագանդիստ ուղարկելով սահմանափակվել չի կարելի: Իրանից դուրս, քաղաքային կազմակերպությունները մեծ աշխատանք պետք է կատարեն:

1200 պրոպագանդիստ մոբիլիզացիայի յեթարկելուն զուգընթաց, ԿԿ-ի վորոշումը նշում է այլ միջոցառումներ ևս: Քաղաքային բջիջները կոմյերիտական շեֆարկչալ բջիջներին ոգնելու համար պրոպագանդիստական բրիգադներ ևս պետք է ուղարկեն:

Այդպիսի բրիգադներ կարող են խոշոր աշակերտություն ցույց տալ գյուղական կոմյերիտականների քաղուսուցման կազմակերպմանն ոգնելու գործում:

Այլ ոգնությունը պետք է ընթանա հետևյալ ուղղությունով:

ա) Բացատրել կոմյերիտմիություն IX համադումարի վորոշումները կոմյերիտմիություն գյուղում կատարելիք աշխատանքի, քաղանդագրությունի վերացման և ՀամԿՅՆՄ ԿԿ-ի սահմանած քաղմինի Խումի նշանակություն մասին:

բ) Ոգնություն ցույց տալ քաղկրթության գործի կազմակերպմանն ու քաղկրթոցներին հավաքագրմանը:

գ) Ոգնություն ցույց տալ քաղմինիումի ուսումնասիրությունը:

Քաղանդագրություն վերացման գործը հաջողությամբ անցկացնելու խնդրում խոշոր նշանակություն ունի նյութական բաղան — գրականությունը, դասագրքերը, ուսումնական պիտույքները: Գյուղական կոմյերիտականների քաղկրթության ծավալմանն ոգնելու նպատակով ապրիլի 15-ից սկսվող՝ դրամական միջոցների ու գրականության հավաքման քսանորյա կամպանիայի ընթացքում քաղաքային բջիջները գյուղական կազմակերպություններին պետք է գրականությունից ապահովեն:

Պետք է այնպիսի գրականություն հավաքել, վորը կարողանա ոգնել գյուղական կոմյերիտականներին քաղմինիումի ուսումնասիրության և հետագա ուսման ժամանակ: Այժմեպահանությունը և կուսակցական կազմությունը այս գրականության հիմնական վորակը պետք է կազմեն: Պետք է հետևել, վոր հանձնվելիք գրքերի մեջ չլինեն հնացած գրքեր, վորոնք աղբակույտը

նետելու կամ թղթի գործարաններին հանձնելու համար են միայն պիտանի:

Յուրաքանչյուր քաղաքային բջիջ էր շեֆարկչալ բջիջի համար պետք է թերթեր և ժուրնալներ դուրս գրի («Комсомольская Правда», տեղական մարդային թերթը, „Крестьянская Молодежь“, „Ячейка“ և «За теоретическую учебу» ժուրնալները):

Իրա համար միջոցներ են հարկավոր: Այդպիսին կարելի չէ հավաքել բաժանորդագրական թերթիկներ և լեքեկույթներ ի կազմակերպման միջոցով, նրանցից ստացված ամբողջ յեկամուտը հատկացնել զբաղանուծության, դասագրքերի, թերթերի, ժուրնալների և գրեհական պիտույքների: Այս ախողջ աշխատանքը պետք է կատարել ժամանակին, վորովհետև բջիջները մայիսի սկզբից աշխատանքի պետք է անցնեն:

Քաղաքային բջիջների ոգնուծությունն այսբանով չի սահմանափակվում: Յուրաքանչյուր քաղաքային բջիջ սերտ կապ պետք է պահպանի քաղմիրիմումի կազմակերպչի հետ, ոգնի նրան բջիջում ուսուցումը կազմակերպելու գործում: Հարկավոր է գյուղ փոխադրել ուսուցման այն լավագույն փորձերը, վորոնք կլինեն քաղաքային դպրոցներում, շեֆերի և յինթաշեֆերի միջև

լավագույն ուսուցման շուրջը սոցիալիստական մրցություն կազմակերպել:

Վատ չի լինի, վոր քաղաքային բջիջը կոնսուլտանտներ նշանակի և պարտավորեցնի, վոր նրանք բանավոր և գրավոր խորհուրդներով (նալած շեֆարկչալ շրջանի հեռավորության) ոգնություն ցույց տան գյուղական պրոպագանդիստներին քաղգյուրցի ղեկավարության գործում:

Այս ասպարիզում առանձնապես մեծ աշխատանք կարող են կատարել ԲՈՒՀ-երի, ԲՏՈՒՀ-ների և բանֆակների բջիջները:

Գյուղական կոմյերիտմության առաջ մեծ և բարդ խնդիր է դրված՝ այն է, վեց ամսվա ընթացքում վերացնել բոլոր գյուղական կոմյերիտականներ թաղանգրագրիտությունը:

Քաղաքի ախտիվ ոժտանդակությամբ՝ այլ խնդիրը կկատարվի:

«ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՏԵՄՊԵՐ, ՊԼՅՈՒՍ ՎՈՐԱԿ»

Քաղմիրիտումի մշակման ամբողջ աշխատանքը պետք է ընթանա սոցիալիստական մրցության և հարվածայնության ստույգ ու փորձված մեթոդի հիման վրա:

Մրցությունը պետք է ամենից առաջ կազմակերպել բջիջի ներսում՝ դպրոցի առանձին

խմբերի և ունկնդիրների միջև: Մրցությանը պետք է դարկ տալ պրեմիաներ և չլարգևներ սահմանելու միջոցով:

Միևնույն քննիչի ու դպրոցի ներսում մըրցություն կազմակերպելով չպետք է բավականանալ: Անհրաժեշտ է ուրիշ դպրոցների ու քննիչների ևս մրցման հրավիրել: Ուսման լեքեկոյում պետք է սոցալայմանագիր կնքել, վորի մեջ վորոշել մրցման որյեկտները և այս կամ այն դպրոցի ուժերով հասարակական սգտակար աշխատանք կատարելու ուղղությամբ վերցվելիք կոնկրետ պարտավորությունները: Իբլ և մրցման որյեկտ հարկավոր է վերցնել հետևյալը.

1. հարյուր տոկոսով հաճախել պարապմունքներին.

2) քաղմիրնիմումի լավագույն յուրացումը (ստուգել քաղպալքարի միջոցով).

3) հարյուր տոկոսով պատրաստվել պարապմունքներին.

4) ախտիվ մասնակցություն ունենալ հասարակական աշխատանքին.

5) հաղվածայնորեն տանել դաշտային աշխատանքը:

Պայմանագրում պետք է նշել այսպիսի պարտավորություններ.

1) կոտնտեսականների և անհատ տնտեսատերերի հետ զրույցներ և ընթերցանություններ ունենալ.

2) ներգրավել կոտնտեսությունները.

3) ոգնել գյուղխորհրդի, կոոպերացիայի, խրճիթ-ընթերցարանի և դպրոցի աշխատանքներին.

5. կոտնտեսությունում պալքարել պլանի կատարման համար.

5) անկուսակցական լեքիտասարգներին կոմլեքիտմիության շաքքերը ներգրավել և ալլն:

Սոցմրցումը միայն այն ժամանակ արժեքավոր կլինի և կկատարի իբ մոբիլիզացիոն դերը, լեքը մասնակիցներն իրագեկ կլինեն նրա ընթացքին, կտեսնեն ուսուցման կոնկրետ թերությունները: Բջիջալին կազմակերպիչը մրցության մշտական հաշվառում պետք է կատարի (մրցության տախտակ, սև և կարմիր տախտակ):

Միմիայն այս պալքմանով և, վոր քաղանգրագիտության վերացման հաշողությունն ապահոված կլինի և ՀամկԿՑԽ IX համագումարի վորոշումը կիրագործվի:

Կարն ժամանակում բարձր վորակ: Այս լուզունգի ներքո պետք է կազմակերպել գյուղական կոմյերիտականների քաղանգրագիտության վերացման ամբողջ աշխատանքը:

## ՉԵՌՆԱՐԿԵԼ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՀամկՅՅԵՄ ԿԿ-ի վերոշումը

Գյուղական կոմյերիտականների բողոսնորագրատության վերացման վերաբերյալ ՀամկՅՅԵՄ IX համագումարի ընդունած վերոշումների կատարման մասին

Պարտավորեցնել բոլոր կազմակերպություններին ապրիլի 25 ից ձեռնարկելու համագումարի այն վերոշումն կատարմանը, վորը վերաբերում էր գյուղի կոմյերիտականների քաղաքագրատության վերացմանը: Յեղնելով սրանից, հանձնարարել ՀամկՅՅԵՄ բոլոր չեղկրկոմիտեիին, մարգրկոմիտեիին, ազգային հանրագեոուլթյունների ԿԿ-ներին, իսկ նրանց ղեկավարութեամբ՝ բոլոր շրջկոմիտեիին ու բՆԻՆեիին՝ քննարկել ավյալ հարցը և ԿԿ ի այս վերոշումը և նշել կոնկրետ միջոցառումներ՝ իրագործելու համագումարի վերոշումը գյուղական կոմյերիտականների քաղաքագրատության վերացման մասին:

Վերակազմել գյուղի քաղկրթական ներկայացնք՝ հիմք ունենալով այնպիսի մի դրուբյուն, վոր յաւաճանյալ գյուղական կոմյերիտական ստուգվելու կարգով մեակման յեմբարկի յեվ յուրացնի պարտադիր քաղմիքիմումը:

Գյուղական կոմյերիտականների առանձին խմբերի համար սահմանել հետեյալ պարտադիր քաղմիքիմումը:

Քաղաքականապես անգրագետ և հանրապրթական առարկաներից կիսագրագետ գյուղական կոմյերիտականների համար:

«Լեհինի կուսակցութեան մասին» (կուսակցութեան կառուցվածքի հիմունքները, կուսակցութեան քաղաքականութեունը գլուղում):

«Իսսակարգային պայքարի մասին»:

«Ի՞նչ է խորհրդային իղխանութեունը» (Սահմանադրութեան հիմունքները և խորհուրդների խնդիրները գլուղում):

«Կոմյերիտմիութեան հերթական խնդիրները»:

Քաղաքականապես կիսագրագետ կոմյերիտականների համար, վորոնք քաղընթերցանութեան դասագրքերով սովորում են ընթացիկ քաղաքականութեան և քաղընթերցանութեան խըմբակներում:

«Կուսակցութեան քաղաքականութեունը գլուղում»:

«Մենք թեակոխել ենք սոցիալիզմի շրջանը»:

«Համկ(բ)՝ բանվոր դասակարգի կուսակցութեունն է»:

Հանձնարարել կհ-ի Պրոպագանդայի ու տեսական ուսուցման բաժնին և «Մալադայա գվարդիա» հրատարակչությանը մեկ ամսվա ընթացքում լույս ընծայել այդ բրոշյուրները՝ 6 տպագրական թերթի ընդհանուր ծավալով: Հանձնարարել կհ-ի Պրոպագանդայի և տեսական ուսուցման բաժնին կազմել հանձնարարելի գրականութան ցուցակ իբրև այդ թեմաների լրացում՝ հիմնվելով Լենինի և Ստալինի բնագիր գործերի վրա:

Հանձնարարել քարտուղարութանը՝ քննել գրականութան վորակը:

Գտնել, վոր այս թեմաների մշակումը պարտադիր է:

Մշակման համար ժամկետ նշանակել 6 ամիս:

Այս թեմաների ամբողջ մշակումը պետք է հիմնված լինի սոցիալիստական մրցութան վրա՝ առանձին բջիջների, շրջանների և մարզային ու յերկրային կազմակերպությունների միջև:

Կոմյերիտմիություն մարզային և յերկրային կոմիտեներին՝ խիստ վերահսկել և ստուգման յենթարկել քաղմիներումի մշակման աշխատանքի կատարման ընթացքը: Այս միևիմուտք մեակելուց յել հասկապես կազմված հանձնաժողովների միջո-

ցով յուրացման վորակը ստուգելուց հետո, յուրաքանչյուր կոմյերիսակաճի տնդամասումսուտ հասուկ մարկա պե՛տ է փակցնել, ի հաստատարյուն այն բանի, վոր սլյալ կոմյերիսականը յուրացրել է պարտադիր փաղմիմուտքը:

Առաջարկել մարզկոմներին, յերկրկոմներին և ազգային հանրապետությունների կհ-ներին՝ քաղմիներումի վորակապես բարձր մշակում ապահովել: Այդ մշակման հիմնական խնդիրը պետք է լինի՝ բարձրացնել կոմյերիտականների քաղաքատարատությունը, կոմյերիտականներին էլ ափելի մեծ չափով մորիլիզացիայի յենթարկել՝ պաշարեղու կուսակցություն գլխավոր գծի համար, գլուղ աստիտություն սոցիալիստական վերակառուցումը գործնականորեն իրականացնելու համար:

Յաջարկել բոլոր կազմակերպություններին՝ այս աշխատանքը կատարելու հասար մորիլիզացիայի յենթարկել սլյալ կազմակերպության բոլոր փաղափառապես գրագես կոմյերիսականներին:

Պարտավորեցնել բոլոր կոմյերիտական թերթերին սխատամատիկ կերպով վերահսկել և ստուգել քաղմիներումի մշակման ու ծավալման ընթացքը: Պարտավորեցնել «Смена» (Լենամարդկոմի որդան և «Комсомолец Украины» (Ռկրալնայի

ԼԿՅԵՄ ԿԿ-ի որդան) թերթերի խմբագրություններին քաղմինիմումի հարցերի շուրջը հեռակա հոնսուլտացիաներ կազմակերպել:

Քաղաքականապես ամենից ավելի զարգացած կոմյերիտականներից և բլիշների բյուրոների առկամներից բոլոր բլիշներում առանձնացնել ֆալուսուցման կազմակերպիչներ, վարոնց պարտականության մեջ մեկում է բջիջների ֆալուսուցման կազմակերպումը յեվ ֆալմինիմումի մեակման ամենորյա վերահսկողությունը:

Մոբիլիզացիա անցկացնելու ժամկետը՝ 1 ամիս:

Պարտավորեցնել ՀամԼԿՅԵՄ բոլոր քաղաքացային բլիշներին՝ շեֆություն կարգով հատուկ պրոպագանդիստական բրիգադներ և առանձին ակտիվիստներ ուղարկել պոլզը, վարպետներանք լգնություն ցույց տան գյուղական բլիշներին լրացագանդիստական աշխատանքի համար:

Ապրիլի 15-ից կազմակերպել զրամական միջոցների և գրականության հավաքման համաժողովներական քանորյակ, գյուղական կոմյերիտականների քաղկրթության ծավալման գործին ոժանդակելու համար:

Նպատակ ունենալով մշտական վերահսկողություն սահմանելու ավյալ վորոշման կատարման

նկատմամբ, 6 ամսյա ընթացքում, հաշված ապրիլի 10-ից, գյուղական կոմյերիտականների քաղանցագրություն վերացման համար ԿԿ-ի առաջ անձնապես պատասխանատու դարձնել հեռակալ ընկերներին:

Ի վանով (Մոսկվայի մարզկոմ), Վալչել (Լեհիզրադի մարզկոմ), Գապեչել (Ուկրաինայի ԼԿՅԵՄ ԿԿ), Գերասիմով (Իվանովո-Վազնեսենսկու արդյունաբերական մարզկոմ), Պոպով (Նիժնի-Նովգորոդյան մարզկոմ), Ստուկալով (Ն. Վոլգա), Չարեյին (Արևմտյան Սիբիր), Պոպոբնի (Հյուս. Կովկասի չերկրային կոմիտե), Լեոնով (Արևելյան Սիբիր), Կուշակովսկի (Միջ. Վոլգա), Շաց (Ուրալի մարզկոմ), Բորզով (Կապակստան), Տատարնիկով (Միջ. Ասիա), Ռուդկիս (Կենտր. Սևահող. մարզկոմ), Գրեգորյան (Անդրլիբկոմ), Գուզկին (Բելոռուսիայի ԼԿՅԵՄ ԿԿ):

Մնացած մարզկոմներում, չերկրկոմներում և ազգային հանրապետություններին ԿԿ-ներում, ավյալ վորոշման կատարման անձնական պատասխանատվությունը դնել Պրոպագանդայի և տեսական ուսուցման բաժիններին վարիչների վրա:

Պարտավորեցնել չերկրկոմներին, մարզկոմներին և ազգային հանրապետություններին ԿԿ-ներին

բին՝ ապրիլ 15-ից սկսած ամեն ամիս ԿԿ Ին-  
ինֆորմացիա ուղարկել Ղյուզական կոմիտեիտա-  
կաններին քաղանդրադիտութեան վերացման ըն-  
թացքի մասին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0222538

52.336

УДК 20 144. (2 6)



Ф. ШУРЫГИН

**КАК ОРГАНИЗОВАТЬ ПОЛИТ-МИНИМУМ  
В ДЕРЕВНЕ**

Госиздат ССР Армения  
Эривань—1981